

ՀԱՅ

ՄՎԱՐՏ



ԿԻՍԱՄՍԵԱՅ ՕՐԿԱՆ Բ.Մ.Ը.Մ.
Hai Scout Organe des
 SCOUTS ARMÉNIENS

ՀԱՍԵ - Խորասանճեան Խան, Թի 26, Սրբէջի և Պոլիս
 ADRESSE - Khorassandjian Han, 26, Sir-Kédji Constantinople

Հեռանայն Ար. 2146 | ԲԱԺՆԵԳԻՆ | Telephone St. 2146



F. ՏԱՐԻ ԹԻ 21

Պոլիս և Չալսաճ Երկ, շրջ. 120

Արտասահման . Տր. 15

Ամերիկա . Տոլ. 150

1-15 ՅՈՒՆԻՍՏ 1922



II ՅՈՒՆԻՍՏ ԳՈՒԼՈՅ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՔԼԵԹԻԲ ՄՐՅՈՒՄՆԵՐԸ
 1. Միիրարեան վարժարանի սաները: 2. Կապեան վարժարանի սանուհիները
 3 4. Պոլսանի զինգի Միս Բաշմենի սրբանոցի սրբերը և սրբուհիները:

Աճկախ կարծիքներ

ԹԵԼԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԸ ՀԱՅ ԽՄԲԱՊԵՏՆԵՐՈՒՆ

Մայիս 21 կիրակի օրուան համար հայ սկսուսները արշաւ մը կազմակերպած էին դէպի բաց դաշտը «Գայիշ տաղի» 9-10 քիլոմէթր հեռաւորութեամբ տեղ մը: Շատ օրեր առաջ իսկ, երբ հաճոյքը կ'ունենայի սովորաբար հանդիպելու փոքրիկ բարեկամներու, բնաւ չէին մտնար, մէկ խօսք բրածի պէս, ըսել ինծի: «Պարոն, արդեօք կիրակի օրը պիտի բնկիրանա՞ք մեզի»: Անկեղծ նայուածքի մը տակ այս անուշիկ հրաւերը արդէն իր հրապոյրը ունենալով ինձ համար, վայրկեան մը չ'էի կրնար վարանիլ ոչլեւս: Շարաթ իրիկուրէն կը փութամ հաւաքավայրը Ակիւտար, ուր գիշերը անցնելէ վերջ, խմբովին ճամբայ կ'ելլենք լուսածագին:



Հայ սկսուսներ «Գայիշ Տաղի» արշաւին մէջ

Շիտակը Մայիսի օդ չ'էր. քիչ մը ցուրտ և խոնաւ, մթազնած երկինք, և սաէպ թեթեւ անձրեւ մը կ'ուզար: Ասոր հակառակ խոտերը թարմութիւն չ'ունէին, անուշահոտութիւն չ'էր բուրբեր, ծաղիկները կարծէք ինքզինքնին պահած էին մէյ մէկ մութ անկիւն, թռչուններ ալ չ'կային ոչ ալ կը լսուէր անոնց ձայնը, և արդարեւ «Այս կողմերը սոխակ չ'իկա՞ք» կը հարցնէր պարոն մը զօրմացած:

Կը քալէի խումբին հետ լայն ասպարէզ տալով ուսումնասիրութիւններու ու խորհրդածութիւններու: Անոնք մեր լեզուով սկսուսական կրնային ըլլալ այն միջոցին, քանի որ մերի բնութեանէն զատ սկսուսներուն երկայն շարքը միայն կար աչքերուս առջեւ, որ հսկայ սողունի մը պէս կ'ընթանար հետզհետէ, թուրք

հողագործներէն երեսանց հերկուած պարտէզներու եզերքէն, իջնելով, ելլելով խորտ ու փորտ ճամբաներէ սրոնք ամէն վայրկեան նորանոր ուղղութիւններ կը պարտադրէին մեզի:

Ուշադրութիւնս կեդրոնացուցի ուրեմն հայ սկսուստին վրայ, հետեւեցայ իր շարժումներուն, բազմաառեցի անիկայ իր ընկերոջը հետ, դիտեցի մէկ խումբէն միւսին տարբերութիւնը և այս վերջին տեսութեանս մէջ ի յայտ բերի վարիչ պետին ազդեցութիւնը իր խումբին վրայ, այս վերջին տեսակէտը զիս մասնաւորապէս հետաքրքրելով որոշեցի լաւ ուսումնասիրել այդ ազդեցութիւնը, եզրակացութիւններ ձեռք բերելու համար:

Յառաջացանք գիւղակներու մէջէն տեղ տեղ հանգիստ առնելով, և հասանք վերջապէս տափարակ գետնի մը եզերքը. ուրիկից բաւական հեռու կը տեսնուէր Գայիշ տաղին. հոն պիտի անցնէինք օրերնիս: Արդեօք դիտող աչքեր հայաստանի պատկերը չի՞ պիտի տեսնէին այդ տեղ, և դէպի լեռը յառաջացող գունդերը չի՞ պիտի ներկայացնէին դէպի հայրենիք դաղթը... Այդ պատկերը ես գծեցի ինձ համար երեւակայութեանս մէջ, և ըստ այնմ դնացք սուի ոտքերուս մերթ դանդաղ և մտածկոտ, մերթ խանդավառ, ազդուելով պարբերաբար, հիանալի պատկերին երբեմն մութ, երբեմն վարդագոյն հորիզոններէն, Գիմացոյ, Գայիշ տաղի սեւերես բարձունքին տեղ կ'երեւակայէի Արարատի արծաթափայլ ճակատը, կը կարծէի յառաջանալ հայաստանի բարեբեր դաշտերուն մէջէն, և իրաւ ալ այս պատկերին ազդեցութեանը տակ դիւրաւ կը քալէի, մինչդեռ անկեց առաջ հազիւ կը քաշքշուէի տաճկական ապերախտ գետիններուն վրայ:

Քիչ մըն ալ քալեցինք ու հասանք լեռանը ստորոտը: Ամէն խումբը ընտրեց իր սիրած վայրը և բանակումները հաստատուեցան իրօրմէ հեռու: Նոր պատկեր, ալ աւելի գեղեցիկ... Հայաստանը, հայ բնակիչներով անիկայ հեռուդհեռէ կը կենդանանայ և ես աւելի կը տարուիմ: Այս բնակչութիւնը արդեօք ինչպէս պիտի փութար չէնցնել հայրենիքը: Անտարա-

կոյս հաստատուելէ վերջ պիտի մօտենային իրարու խնդակցելու, շնորհաւորելու, ապա խորհրդակցութիւններ պիտի ըլլային համագործակցութեամբ միացուած ուժերով սկսելու անյապաղ վերականգնումի գործը:

Կէս օրը մօտ էր, սկառանները անօթի էին, օճախները փորուեցան, չորցած ճիւղակները հեռո՛ղհեռէ կը բերուէին և ճերմակ ծուխը կը բարձրանար ասդին անդին տեղի տալով կարմրուկ բոցերու: Եփոցը պատրաստուեցաւ, ըսկառանները կերան, խմեցին՝ կշտացան և գետինը երկնցան հանգստանալու համար:

Կ'սպասէի որ այս հանգիստը վերջ գտնէր, սկառանները կանգնէին և սկսէին գեղեցիկ անակնկալներու: Գաշապին խաղ մը, պարեր, երգեր խմբովին, խօսակցութիւններ գիտական, ընկերային կամ բարոյական ծանօթութիւններու շուրջ, չի գիտեմ ուրիշ ինչ տեսակ տեսակ բանէր որ պատկառելի թիւով ընկերութիւն մը կրնար ստեղծել... սակայն ոչինչ և ոչինչ... ժամերը կ'անցնէին և ճամբայ-ելքը կը մօտենար:...

Սկառանները իրարմէ հեռու ապրեցան ամբողջ օրը, զինադադար հռչակած թշնամի բանակներու պէս ոչ մերձեցում, ոչ նոր բարեկամութիւններ, հօս կը վերջիչեմ հայրենիքի պատկերը որ բարեբախտարար անհետացած էր երեսակայութիւնէս այն միջոցին, եթէ տակաւին կենդանի մնար մտքիս մէջ, և ներկայացնէր ինձ հայաստանի ապագայ բնակչութիւնը, անտարակոյս ցաւալի տպաւորութիւն մը զիս պիտի շրջապատէր, եթէ հայ երիտասարդութիւնը այս ձեւով կը խոստանայ պանծացնել հայրենիքը, չորցնենք կաթիլ մը յոյսերնիս և անոր տեղ դնենք յուեանսութիւնը:...

Անդրադառնալով դարձեալ այն եղանակին որով մտադրած էի ժամանակս օգտագործել, մօտեցայ զանազան խումբերուն և սկսայ խօսակցիլ սկառաններուն հետ: «Tel maître tel valet» ըսածին պէս, ինչ է խմբապետը, նոյնը գտայ և իր սկառաւը: Դիտեցի որ զինուորականութեան մէջ հասած խմբապետին սկառաւը, մասնաւորաբար կ'ուզէ իր դիրքը և կը պատասխանէ որոշ և կտրուկ բառերով, աթէլթիամի սիրահար պետինը ընդհանրապէս եռանդուն գտայ, զուարթ և արագախօս, կը փորձէր ժամ առաջ խօսափիլ, վազելու, ցատկելու համար, գնդակին ձայնը սրտին իւզերը կը հալեցնէր, ուրիշներ ծիծաղախօս, ոմանք

աւելի լուրջ կամ վարանոտ պատկերացոյցին ինծի իրենց պետերը:

Հայ սկառաւ խմբապետները, կը տեսնեմ թէ արդէն տաշած են հայրենիքին հիմնաքարերը, աւելի զիւրին չ'է արդեօք պատրաստել շաղախը զանոնք միացնելու համար:...

Ըստ իս հաւաքականութեան ոգին քաջալերող միջոցները արդէն ինքնին կը պորտադրուին ընկերութիւն մը ախորժելի դարձնելու համար: Օրինակի համար եթէ նոյն օրը, բանակումները շրջանակ ձեւացնէին քով քովի կլոր գետնի մը շուրջ, որուն վրայ սարքուէին խաղեր, մրցումներ, պարեր և այլն. տպաւորութիւնը այդ օրուան շոտ աւելի գեղեցիկ պիտի ըլլար ամենուն համար: Ուրիշ շատ միջոցներ կան որոնք ծանօթ են խմբապետներուն, սակայն, այժի առջև ունենալով ինքրին կարեւորութիւնը և աներեւակոյցիլ անտարբերութիւն մը անոր մասին, նոր միջոցներու գիմել անհրաժեշտ կը նկատեմ. պզտիկ անկանոնութիւններու հանդուրժելով նոյն իսկ, նախնարելով չարեաց փոքրագոյնը: Կը խորհիմ թէ լաւ պիտի ըլլար, արշաւներու ատեն քով քովի բերել, շարքերը կազմելու համար, տարբեր խումբերու սկառաններ. պետերու համագործակցութիւնը ամէն առիթով նշանակելի օգուտ մը պիտի ունենայ անտարակոյս, գալով խումբերուն մերձեցմանը, պարտաւորիչ այցելութիւններ մեկզմէկու շուտով կը պատրաստէ լաւագոյն գետին մը:

Հայ սկառանները նախաձեռնարկ չե'ն դժբախտարար. և եթէ միջոցներ չի ցուցնենք իրենց՝ և չ'աշխատինք վարժեցնելու համար զանոնք այդ ուղղութեան մէջ, անյոյս կը մնանք իրենցմէ հայրենիքի վերաշինութեան գործին մէջ:

1920 ին, երբ, չեմ յիշեր ինչ առիթով կազմակերպուած գաշտահանդէսէ մը կը բաժնուէին սկառանները փառաւոր տողանցքով մը, խանդավառութիւնէ թրջուած աչքերով, ծեր հայրիկներ կը հետուէին անոր գնացքին: Տակաւին ականջիս կը հնչէ անոնցմէ մեկնուն ձայնը Վաղաքներ, կը պոռար մեր ետեւէն, Հայաստանը ձերն է, դուք պիտի շէնցնէք զանիկայ և մեր ոսկորները պիտի հրձուին այդ տեղը: Աւանդը խիտ թանկագին է, և նոյնքան գեղեցիկ արժանանայ անոր, արդեօք հայ սկառանները պիտի իրականացնեն այդ բաղձանքը:



"Երբ որ Բանք"

Պատմութիւն Լ. ՍԱՐԴԻԽԱՆ Է

Պատկերներ՝ ԱԼ. ՍԱՐԴԻԽԱՆԷ

Եթէ նոյն պահուն շանթ մը իյնար մեր մէջ, այս խօսքին թողած ազդեցութիւնը պիտի չունենար: Չայնը, որ ուղղակի վտանգաւոր սենեակէն կու գար մեր բարոյական ուժին վերջին հարուածն էր: Քանակներու, զաւազաններու, մինչեւ իսկ աւելին և բահին խորխոր ու սպառնալից գլուխները պիտի խոնարհեցան և երբ տեսանք—Աստուած իմ, միթէ կարելի էր հաւատալ—գոհան ստորին բացուածքէն զուրս ցցուող կրօն, փորրիկ խօզովակ մը. որ մտաւայ պատուանէն ներս թափանցող լուսոյ թռչ ճառագայթի մը տակ սպառնալից կերպով կը վայելէր՝ մեր երակներու մէջ տակաւին մնացած քաջութեան վերջին նշանն ալ բոլորովին ցնդեցաւ: Ի՞նչ կը մնար ընել այնուհետեւ, եթէ ոչ նազանգիլ շարագործին հրամանին և քաջութիւն աչք տեղէն կարելի չէր դիմադրել մեր ծիծաղելի զէնքերով, ատրճանակի մը:

Քանի որ խնդիրը այս վտանգաւոր հանգամանքը ստացաւ, անհրաժեշտ էր որ անօրէնին տեղեկութիւն տրուէր այդ մասին: Փրօքի որ պիտի վերջ գտէր, սրանեղէր, մինչեւ իսկ սարսափէր խեղճ ձերուներն, բայց այդպիսի պարագային պահանջուած միակ անձը ան էր: Ան էր, որ կրնար յարմար հրահանգներ տալ և ինք առանձին, կրնար աւելի լաւ գործել քան մեր տասնըփնից տկար և անփորձ մատակներու խումբը: Ճակատին խնդիրը ծայրայեղութեան չհասած, տակաւին անդարձանել արարք մը չգործուած՝ առանց մէկու մը խմացընելու անմիջապէս վաղեցի անօրէնին:

Հանդարտօրէն վառող փոքրիկ կրակի մը մօտ, նոյնպէս հանգարտիկ՝ ձերուներն նստած էր գրասենյակին առջեւ: Հաւանաբար կը զբաղուէր գործարկական կանոնադրին վերաբնութեամբ, գործ մը, որ իրեն շատ սիրելի էր: Պիտի խանգարէի աղանդաբար իր այս գերագոյն խաղաղութիւնը, և այս բանի համար ցաւելով հանդերձ, մտեցայ իրեն: Մըտազրեցի գոնէ ինքզինքս հանգարտ պահել և ո՞ր է այլալուծիւն շուտցնել սակայն երբ առաջին բառս արտասանելուս, տեսայ անօրէնը անհանգիստ և խռոտոված շեշտակի ինձի նայելով՝ իմացայ իսկոյն որ իմ նպատակին մէջ չէի յաջողած: Թերեւս զէմքէս ու շարժումներէս ծանրակշիւ եղելութիւնը կ'առնեց, գործին խմացնելու եկեր էի: Հետեւաբար պարտաւորութիւնս կորսնցընելով՝ գոչեցի:

— Հասէ՛ք, պարտե՛ս, գոգութիւն մը կը կատարուի այս պահուս:

Իմ շփոթելուս նկատման ձերուներն ալ շփոթեցաւ: Կանոնադրի վերաբերեալ մեղեմաբար վարձեց, քանի մը բառեր մըմնջեց անխելի ձայնով ու յանկարծ դարձաւ ինձի:

— Ի՞նչ ըսիր: Այս խօսքը արտասանելու ատեն հարցնելէ աւելի երեսս ի վեր պոռաց, կարծես յանդիմանելու զէր զիս: Որովհետեւ խնդիրը կարուկ կերպով հասկցընել կարէ՛լի ըլլար իրեն, ինքս ալ գոչեցի:

— Գո՛ղ կայ, պարտե՛ս, գո՛ղ: Յայտնի տեսայ որ անօրէնը տագնապաւ Ուղեց հարցումներ ուղղել, բայց ծայրայեղ ջղայնութեանը պատճառաւ շտապեցաւ վերջապէս թոթովեց:

— Ո՛ր է, ո՛ւր, բո՛ւ տեսնեմ: Ինձի նկատմանս այս հարցումը բեցին իմ ընկերներէս մէկ քանին որոնք ինձմէ վերջ վազեր էին անօրէնին միեւնոյն նպատակով:

— Ննջարանին մէջ է, բացառանկէց մին: — Ահա ժամ մըն է գրեթէ որ հոն է, վրայ բերաւ ուրիշ մը:

— Ամբողջ ազարը միացած՝ ոչինչ կրցանք ընել անօր զէմ, աւելցուց երրորդ մը:

Եւ վերջապէս չորրորդ մը տուաւ վերջնական հարուածը՝ գոչելով:

— Ատրճանակով մըն ալ սպառնաց մեզի: Տնօրէնին վիճակը նոյն պահուս իրապէս գլխութեան արժանի էր: Տաք կրակի վրայ եռացող ջրով ի կամայայի մը նման վեր վեր կը ցատկուտէր իւրաքանչիւր խօսքին, որոնք իր վրայ շանթի մը ազդեցութիւնը կը թողուն: Մերթ ջղայնուտ շարժումով իր արեւմտեան մօրուքը կը շոյլը, մերթ շեշտակի ու յուսահատ՝ մեզ կը գիտէր: Իսկ երբ վերջին բացառանկութիւնն ալ խմացաւ ա՛լ ինքզինքը զսպել անհնարին ըլլալով՝ հսկայ ոստիւն մը գործեց գրեթէ երիտասարդական ճիւղնութեամբ, գլուխը առաւ երկու ձեռքերուն մէջ ու սարսափահարի մը ամեն երեւոյթներով սկսաւ գոչել և աղաղակել:

— Գո՛ղ, ատրճանակ մեր յարկին տակ, այս վարժարանի մէջ:

Յուզումէն և կատաղութենէն ձերուներն չէր կրնար խորհիլ թէ ի՞նչ պէտք էր ընել և այնպէս կ'երեւար թէ երբէք պիտի չկարենար հանգարտիլ, ցրուց վերջապէս որոշում մըտուաւ կարծես ու զատնալով մեզի:

— Դո՛ւն, Գեւորդ, զնա՛ շուտով ոստիկան կանչելու, հրամայեց իսկ զո՛ւն Մանուկ, իմաւոր վարժարանի բոլոր ծառաններուն որ հոս հաւաքուին:

Այս հրամանը գործադրելու համար, բնական է անմիջապէս շարժեցանք, բայց անօրէնը մեր ետեւէն գոչեց:

— Կեցէ՛ք, ո՛ւր կ'երթաք: Միթէ մեր վարժարանը պիտի խայտառակուի՞ ամէնուն առջեւ: միթէ պիտի թողու՞մ որ իմ յարկս սրտաւարտուի այնպիսի զէպքով մը, որ վաղն իսկ ամէնուն բերանին մէջ

չըջի Ո՛չ, ոչ, մի կանչէ՛ք, հարկ չկայ, ոստիկան չեմ ուզեր ես այստեղ: Չետո եկէք միայն գողին քով՝ կ'ուզեմ սեռանել այդ անիծեալը:

Մենք անցանք առաջ: Տնօրէնը՝ հակառակ իր յառաջացեալ տարիքին՝ արագութեամբ և փութ-կոտորութեամբ, գրեթէ վազէ վազ հետեւեցաւ մեզի մինչև այնտեղ ուր տակաւին մեր խումբին մնացորդը պահակ կը սպասէր: Գողը տակաւին սենեացոյց մէջն էր և իմ բացակայութեան միջոցին ոչ մէկ փոփոխութիւն մտած էր դէպքերու մէջ: Առաջուան պէս տղաքը կ'սարսուրտէր շարուած էին և ամէն ոք զէնքը պատրաստ վիճակի մէջ բռնած էր: Երբ անօրէնը նշմարեցին, ամէնքը մէկ ընկրկեցան ետ: Զէնքերը յանկարծ անհետացան և վահէ անձայն՝ հեռացաւ դրան առ ջեւէն: Երբուհին հասցնեցով և շուարած անցաւ անոր տեղ, ու առանց խօսք մ'իսկ ըսելու՝ ընդհանուր դարձայման և սպասման մէջ սկսաւ կորոյի կերպով փորձել գուռը բանալու, որ ներսէն կ'զուլուէր:

Բայց յանկարծ ետ ետ քաշուեցաւ ու քանի մը յայլ նահանջեց, երբ քիչ մը առաջուան ձայնը կրկին լսուեցաւ, աւելի բարձր, աւելի սպառնալից:

— Ահա՛ երրորդ աղագարութիւնս, քաշուեցէք այստեղէն ապա թէ ո՛չ... կը զըջաք:

Եւ այս երրորդ անգամուն այլ անարկու և սրածայր խողովակը, յուսահատեցուցիչ յամսուութեամբ մը կը ցցուէր ու կը ցցուէր դէպի մեզ, կարծես ուզելով խորի մեր սրտին մէջ, մեր հոգւոյն մէջ: Կարելի չէ նկարագրել այն խոր սպաւորութիւնը, որ թողուց այդ սարսափելի զէնքը անօրէնին վրայ: Թէև մութ էր մեր շուրջը, բայց ես կրցայ նշմարել սուկումի այն սարսուռը, որ նոյն պահուն անցաւ խեղճ ձեռքերին մարմնէն, մինչ վհատութեան ու կսկիծի խոր հառաչ մը կը թռէր անոր բերնէն:

Ահանջ սպասել թէ ի՞նչ պիտի որոշէր՝ մեր անօրէնը, երբ ցած ձայնով և ահամայն՝ խօսեցաւ մեզի.

— ձոր չկայ, գացէք կանչելու ոստիկաններ և թող պատահի ինչ որ պիտի պատահի:

Անմիջապէս հասկցանք թէ ո՛րքան ճնշուած և յուսահատ գրութեան մէջ ինկած ըլլալու էր ան, այդքան դառնօրէն խօսելու համար: Սակայն ոչ ոք տեղէն չարժեցաւ այդ հրամանին վրայ, աւելի ճիշդ՝ կարողութիւնը չունեցաւ շարժելու, քանի որ ամէնուս երակներուն մէջ արիւնը գրեթէ սառեր էր: Աւա՛ղ, մեր երեւակայութիւնը զմեզ շատ խաբած էր. ո՛րքան զժուար է եղեր աւաղակի մը դէմ գտնուել, այն գոր մենք այնքան գիւրին կը կարծէինք մեր վիպասան Դիւառեանի պատմութիւններէն զատելով: Ո՛ւր էր ան հիմայ: Ո՞ր անկիւնը կորուսեր էր թող գար հոս անգամ մը, ու իր պատմութիւններու վրայ նոր մըն ալ աւելցընէր: Կամ թող անցնէր մեր գլուխը և իր երեւակայական քաջութիւններէն մին թող հոս փորձէր:

Ճիշդ այսպէս կը մտածէի ես, երբ յանկարծ ուրիշ մը, կարծես զիս գուշակելով՝ միամտօրէն բացազանչեց.

— Ահ, ի՞նչ լաւ կ'ըլլար եթէ միայն Դիւառեանը մեր մէջ ըլլար:

Շուրջ մը նոյն պահուն խանդարեց լուսութիւնը, որ իրը հաւանութեան նշան՝ տիրեր էր այդ խօսքին վրայ: Ամէն ոք դարձաւ դէպի խորհրդաւոր սենեակը ուրիշ եկած էր ձայնը, և որուն դուռը՝ մինչև այն ատեն ամուր կըզուլուէր՝ սկսաւ, կարծես հրաշքով մը, ինքնարեւարար բացուել և ստուեր մը, յամբարար գուռս ելլելով անկէ, ուղիղ գիրքով կանգնեցաւ մեր դէմ:

Ահ, Աստուած իմ Ա՛լ կը հրաժարիմ նկարագրելու այն ճգնաժամային ընթացքն՝ որ ամէնուս սիրտը հաւասարապէս ցնցեց: Կը հրաժարիմ նոյնպէս պատմելու այն զարմանքի, յուսախարութեան, ամօթի և ուրախութեան խառն զգացումները, ամէնքն ալ արտայայտուած զանազան բացազանչութիւններով, երբ այն անձը, որ մեզի մահուան սարսափը տուաւ, մեզ տեսնելուն՝ պաղարիւնութեամբ մը խօսեցաւ. — Ո՞վ կը հարցնէ Դիւառեանի մասին, ահա՛ հս...
* * *

Խօսքի մ հիմայ այն մանրամասնութեանց վրայ որոնք իրարու ետեւէ պարզուեցան. վարդանի երեւակայական ենթագրութիւնը, ի՛ր իսկ սենեակի մէջ գողի հետ շփոթուած «վիպասներ», այս վերջնոյն խաղացած կատակերգութիւնը իր կեղծ ձայնով և ատրճանակ կարծուած դաւադանի կոթովը: Ինչ որ ամէնէն յիշատակելին է սակայն այս դէպքէն յետոյ՝ խարուած ձեռքերուն զուլուէրը, կեղծ գողին հան-գէտի թեւերը խաշածեւ կուրծքին վրայ ծալլած, ցասման ու կատարութեան զգացումները առանց զսպել կարենալու, որոնք իր հոգւոյն խորքէն կը ժայթքէին ու կը փոթորկէին իր կուրծքը, ակնոցները իր արծուային քիթին վրայ հաստատելով, և ուսուցիչն ուսուցնելով՝ գոռ, իշխանական ու շահ-թահարի ձայնով մը գոչեց.

— Դիւառեան, երեք օր բանտ անպատկառութեանդ համար: (վերց)

Ի. Ի. Ներկայ պատմութեան նախորդ մասին մէջ տպագրական տկամայ սխալներ սպրդած են որուն համար ներողամիտ կը զանուին մեր ընթերցողները:

ՍՎԱՌՏ ԼՈՒՂՈՐԴԻ ՄԸ ՔԱՋՈՒԹԻՒՆԸ

— Չո՞րս ժամ, բաւ Մօսկովի, որուն դէմքը գովեստներէն շարագունած էր, ուրեմն լողանք մը չէիք առներ...: Առաջին անգամ, նա իրօք մտածեց թէ անոր կերպարանքը աւելի վտանգէ ազատուողի կը նմանէր քան թէ լուրջորդի մը, և յետոյ երեւոյթը տարօրինակ կ'երեւէր, բայց ան աւելի չէր համարձակէր հարցուփորձել զայն:

«Փայռին վրայ մէկը կա՞ր, երբ իմ օգնութեանս եկաք»: — Ո՛չ մէկը:

— Այն ատեն լաւ է, որովհետեւ... ես կը նախընտրեմ մէկէ մը չտեսնուել:

Վայրկեանէ մը ի վեր սկսուաւ լուրջորդին եկած ուղղութեամբ կը նայէր շատ հետու դէպի Սէզամպրի կղզին:

« Ա՛հ, գոչեց ապշած, միթէ դուք... »

— Այո, փախած կարգապահական զինուոր մը: Ես ինքզինքս չեմ ծածկեր, որովհետեւ դուք բարի տղեկ մ'ըլլալով վտան հմ որ զիս պիտի չմասնէք: Եւ յետոյ մեծ յանցանք մը գործած պիտի ըլլայիք ասոր համար, առանց ստորին մէկն ըլլալու, այս բանը վերջը կ'իմանաք:

Հէնրիկոս Մովիէլի համար՝ կարգապահական մը, ահաւոր աւազակ մ'էր, թիպարտ մը որ կարող է ամէն ոճրագործութեանց և ինք որ իր քաջութեամբ կը հպարտանար, գրեթէ զարհուրեցաւ, այսպիսի մարդու մը փախուս:



« Ինչ գոչեց ապշած, միթէ դուք... »

տին օգնած ըլլալուն համար: Ծառ անդամներ փախուսածներ կատարած էին, դատապարտեալները փոքրիկ նաւակով մը: Ժողովուրդը այս վտանգաւոր մերձաւորութեան դէմ բողոքած էր, և ահա հիմա, ինքը կերպով մը գործակից եղած էր:

« Ի՛նչ յանցանքով հոն զրկուած էք », հարցուց միամտութեամբ:

Միւսը տարտամ շարժում մ'ըրաւ:

— Ա՛հ, վտան եղէք, պղտիկ բան: Կէս օր էր, արիւնը կ'եփի, ի՛նչ կ'ուզես և այս բանս երբեմն գէշ հետեւանքներ կ'ունենայ: Օրանի մէջ զինուորական ծառայութիւնս կը կատարէի, Ափրիկէի սրտորդ զօրաց երկրորդ շարքին մէջ. ես շատ աչքի կը զարնէի, ամէն բան լաւ կ'երթար. հաճոյք կը զգայի ալ խոշոր, ճերմակ զօրանցին մէջ, սեւամորթաց գիւղին մօտ, ըլրակի մը վրայ, որ քաղաքին և նաւահանգիստին կը սիրէ:

Ես երջանիկ պիտի ըլլայի ասանց թօրէնի՝ օթեւաններուն մարաջատին: Երբեք չկրցայ հասկնալ թէ՛ ինչո՞ւ այդ մարդը ինծի հակառակ էր, թերեւս գլուխս իրեն չէր յարմարէր, բայց այդ մարդը ինծի չէր հանդուժեր:

Ամէն անգամ որ ինծի կը հանդիպէր, կեցուածքս կը քննադատէր և ո՛ր և է ոչ ինչ բան կը փնտռէր:

Ես որոշած էի չըվրդովիլ և հանգարտ կենալ մինչեւ արձակուրդիս ժամանակը, բայց, ես սեւ ճակատագիրը հաշիւի առած չէի: Կրնա՞յի գուշակել պատահելիքը... Պէտք է ըսել որ ես նշանած մը ունէի Լա Նուվէլի մէջ:

Ո՛հ, ըսաւ ան, Սկաուտին սարսափած դէմքը տեսնելով, Նոր Գաեաօնի մէջ չէ անտարակոյս, այլ Լա Նուվէլի մէջ, որ արեւելեան Պիրենեաններու՝ Բօր Վանար քաղաքին մօտ լեռանց խոռոչներուն մէջ շինուած փոքր, բայց, սիրուն գիւղ մըն է...: Եւ ահա, որ մըն ալ կը լսեմ որ խմ սիրուն Մարիէզս ծանրապէս հիւանդ է, որ զիս կ'ուզէր, պէտք էր Ֆրանսա անցնիլ:

« Տարիէ մ'աւելի էր որ բանակին մէջ կը գտնուէի, և կրնայի դիւրութեամբ հրաման մը առնել, բայց թօրէն հասկցաւ որ ես արտօնութիւն մը պիտի ուզէի, կատարեցաւ ինծի դէմ, վերջապէս զիս պատժելու շարժառիթը գտնելու համար: Եւ ըլլալիքը եղաւ: »

« Առտու մը ախտուն մէջ ձի զարմանելու ատեն, ինծի անիրաւ գիտողութիւն մը ըրաւ: Պատասխանեցի բայց առանց կոպտութեան: »

« — Ա՛հ, դու զիս նախատեցիր ըսաւ, է՛հ ուրեմն մեկնումի հրամանս պիտի չունենաս: »

Անիկայ շարութեամբ կը ծիծաղէր. ես կը տեսնէի որ փոքրիկ Մարիէզս մեռնելու վրայ էր, և զգացի որ արիւնս գլուխս կ'երնէր: Առանց բրածս գիտնալու իր կոկորդը նետուցայ: Ան կ'ունար: Փոխադարձաբար զիրար խեղդել ուզելով սալայատակին վրայ գլորեցանք... »

« Առաջնորդի մը ձեռք վերցնելը վտանգաւոր է, աւելցուց փախուսականը: Պատերազմական օրէնքով զիս հինգ տարուան դատապարտեցին, և իրաւունքս ալ ունէին, վտանգի օրէնքը օրէնք է: Քսանըեթը ամիս անցաւ ասոր վրայ, և ինծի դեռ չափազանց ուշ կ'երեւի... և այն ատենէն ի վեր ո՞րչափ տառապեցայ, եթէ գիտնայիք... »

« Նախ հոն՝ կիզիլ արեւու մը տակ թէմկատի Հռոմէական աւերակաց պեղումին աշխատակցեցայ, և յետոյ զիս հոս զրկեցին: Գրեթէ տակաւին երեք տարիներ պիտի քաշէի, չափազանց էր, և ես այլեւս կարող չէի, աւելի մեռնիլ կ'ուզէի... Լաւ կը լողամ, ամէն վտանգ աչք առի: »

— Ինչ պիտի ընէք հիմայ, հարցուց սկաուտը, աւելի յուզուած որ չէր ուզէր յայտնի ընել:

— Պէտք է որ ես պահուած մնամ, որովհետեւ ուշադրութիւն պիտի արթնցնեմ: Երբ ըզգեսա մը գտնեմ, պիտի աշխատիմ հեռանալ ասկից գիշերը քայելով, և եղբորմէս ինձի դըրամ զրկել պիտի տամ Սպանիա հասնելու համար, ուր Մարիէզ պիտի գայ զիս վերստին գտնելու:

Մենք հոն պիտի ամուսնանանք:

— Նէ լա՛ւ է ուրեմն հիմայ: Ինձ հաճոյք կը պատճառէ:

— Այո, շնորհակալ եմ: Ան Բօր—Վանարի մէջ . . . Օպլիսքի հրապարակը փոքրիկ թըզթավաճառանոց մը կը բանեցնէ: Ա՛հ ասկից զայն կը տեսնեմ:

— Սպասեցէք ուրեմն, ըսաւ Հէնրիկոս Մովիէլ, ձեզի հագուստ հայթայթելու գաղափարը ունիմ: Հոն կեցէ՛ք ես մէկ կամ երկու ժամէն հոս կը վերադառնամ:

Հինգ վայրկեան յետոյ, ան հեծանելով մեծ արագութեամբ կ'արշաւոր դէպի Սէն Սէրվան առանց հոգ ընելու մարդիկը որոնք իր թըջած զգեստին պատճառաւ զինքը կը գիտէին: Տուն հասնելով՝ աճապարանօք փոխուեցաւ և արատաղի տակի սենեակը գնաց, ուր գիտէր թէ հօրը մէկ հին հագուստը կը գտնուէր:

Զայն ծրարեց և գողի մը պէս սպրդելով, դարձեալ Բօտէնօֆի ճամբան բռնեց:

Դէպքին զիպական կողմը զայն աւելի կ'երջանակացնէր քան քաջութեան գործը զոր կատարած էր:

Կոտանդինի հրապարակին վրայ խաղացող ընկերները, զինքը կանչեցին, բայց նա չկեցաւ:

«Եթէ գիտնային, կը մտածէր ան, որ փախուտականի մը մեղսակից կ'ըլլայի, ո՛րքան պիտի կատէին, խեղճեր . . . » Խարակներուն ստորտը մարդը տագնապալից կը սղասէր, և երբ հագուեցաւ, քիչ մը վտանգութիւն ունեցաւ:

«Անմիջապէս ճամբայ կ'եղնեմ ըստ, ոչ մէկը պիտի չկասկածի թէ ես . . . Լաւագոյնն ալ այս է, վասնզի իմ փախուստս արդէն պէտք է յայտնուած ըլլայ ամէն կողմ:»

Սկառուր գրպանէն փոքրիկ քրակ մը հանեց: Անոր մէջ վախժան Ֆրանք ունէր, ամբողջ իր խնայողութիւնը:

— Առէ՛ք ըսաւ, ասով կրնաք երկաթուղի նստիլ. աս աւելի ապահով է:

Մարդը կ'ուզէր մերժել սակայն ընդունեցաւ, պայմանաւ որ կարելի եղածին չափ կանուխ հատուցանէ իր աղատարարին: Հէնրիկոս Մովիէլ անոր իր հասցէն տուաւ:

«Ես Սուրնաք կը կոչուիմ, ըսաւ փախուտականը, նախ քիչ ատենէն իմ լուրերս ձեզ պիտի զրկեմ:»

Անոնք արդէն ճամբուն վրայ հասեր էին: Բաժնուելէ առաջ հին բարեկամներու պէս իրարու ձեռք սեղմեցին, և երկուքին աչքերն ալ արցունքով լեցուած էին:

«Մն, ինչք բարեաւ, պարոն Հէնրիկոս և սրտանց շնորհակալութիւններ:»

— Բարի յաջողութիւն կը մաղթեմ:

Սուրնաք ոնցանելի ճամբայէ մը արագաբար գնաց, և զարիվարի մը ետեւը աներեւութացաւ: Սկառուր հեծելանիւին վրայ հեծաւ:

Նա յամբօրէն և լրջութեամբ կ'ընթանար, մտածելով դէպքերուն վրայ՝ որոնք այնչափ լաւ կերպով արժեցուցած էին իր տաւօտը: Յիրաւի ոչ ոք պիտի գիտնար որ ինք մարդ մը փրկելու համար կեանքը վտանգի ենթարկած էր բայց, ասիկայ ըրածին վրայ պարծենալէն զինք պիտի զգուշացնէր:

Միթէ մեր լաւագոյն գործերը՝ մեզի համար մեր սրտին խորը պահածները չե՞ն . . .

Թարգ. ՆՐ. ՍԱԼՄԱՍԵԷԱՆ ԱՆՏՐԷ ԲԵՕՋ

ՍՎԱՌԻՏԱԿԱՆ ՆՈՐ ԸՆԾԱՅԻ ՔՆՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՊՈՒՔՐԷՇԻ ՍԷՋ

Մայիս 21 ին կիրակի օր տեղի ունեցաւ Հ. Մ. Բ. Մ. ի Պուքրէշի մասնաճեղքի սկսուածներու նոր ընծայի քննութիւնը եկեղեցւոյ շրջաբակին մէջ, ներկայութեամբ երկեսեւ հայ հասարակութեան:

Մասնաւոր հրաւերով հրաւիրուած էին հետեւեալ ազգային մարմինները.

Հ. Հ. Ընդհ. Հիւպատոսարանը, Պուքրէշի Ելմտ. Գանձնատոյժը, Հոգարարձութիւնը, Թաղականութիւնը և «Նօր Արշալոյսի» ի խմբագրութիւնը:

Սկսուածները տողանցքով մը «պատուոյ առ» ըրին որմէ յետոյ Հ. Հ. Ընդհ. Հիւպատոս Պ. Յ. Խնդիրեան հակիրճ ճառ մը խօսեցաւ ուղղեալ սկսուածներուն:

Սկսուածներու վարչութեան ատենապետ Պ. Գ. Քէտտանեան յայտարարեց որ քննութիւնը սկսուած է, որմէ յետոյ քաղաքս հիւր գտնուող Պոլսոյ Գումգարուի մասնաճեղքի խմբագրութեան Պ. Յ. Թօքաթլեան յանձնեց երիզները և դատնեցը:

Թուր սկսուածները տուին յաջող կերպով իրենց քննութիւնը, պատասխանելով քուր իրենց տրուած հարցումներուն:

Փակումը կատարեց Պ. Հիւպատոսը:

Կեզր. Ելմտականի նախագահ Պ. Ա. Մանիսալեան նամակով մը ցաւ յայտնելով իր ներկայ չըլլալուն համար, իր կողմէ ներկայացուցիչ մը նշանակած և 500 լէշի գումար մը զրկած էր, Պ. Հիւպատոսը յայտնեց որ Հիւպատոսարանը կը նուիրէ 2000 լէշ հետզհետէ եղան հետեւեալ նուիրատուութիւնները:

Հողաբարձութիւն 1000 Գ. Գանիէլեան 300 Յ.
Բարակեան 200 Խ. Ոստանիկեան 100 Ա. Մելիքեան 100
Ս. Վարդան (Կալայէն) 100 Ա. Արթիւնդիշ 100 Ս. Շիշ-
մանեան 100

Թաղականութիւնը խոտապաւ տալ որոշ գումար
մը, այս հասոյթը պիտի յատկացուի սկաուտական
պիտոյքներու գնուածին:

Ներկայ խոռոն բազմութեան վրայ խորհ հմա-
յիշ տարաւորութիւն թողուց հայ փոքրիկ սկաուտնե-
րու զեղեցիկ ու պարզ հանդէսը: Հաստատուած ենք
որ Պաքիէլի տակաւին փոքրաթիւ սկաուտներու
քանակը օր ըստ օրէ պիտի մեծնայ: Հայ լեզուն և
սկաուտիզմի ազնիւ գաղափարները պիտի տարա-
ձուին հայ պատանիներու և անոնց միջոցով նոյն-
իսկ օտարախօս հայ բնասանիքներուն մէջ:

ԵԼԵՒՄՏԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Պ. Ա. ՄԱՆԻՍԱՆԵԱՆԻ ՆԱԽԱԿԸ

Հայ սկաուտական խումբը հայերուս ամենամեծ ու-
շադրութեան առարկան պէտք է ըլլայ, ամէն գիտակից
հայրենասէր իր աջակցութիւնը և բարեացակամու-
թիւնը նուիրելու է տարածելու համար ամբողջ հայ
երիտասարդներու մէջ սկաուտական բարոյական ու
մարմնական առաւելութիւնները, վստահ ըլլալով որ ա-
նոնք պիտի ըլլան ապագային կորիճ, առողջ կրթուած
ազգայիններ:

Շատ կը ցախիմ որ անսկիզբ պատճառաւ կիրակի
օր չպիտի կրնամ ներկայ ըլլալ բնութեան հանդէսին,
որուն մէջ սկաուտական յարգելի վարչութիւնը պա-
տիւն ըրած է զիս իբր անդամ եւ դատար նշանակել
և կը հնդրեմ յարգելի բարեկամ Պ. Արամ Արթիւնդի:
որ ներկայ ըլլայ իմ կողմանէս և հատուցանէ սկաու-
տական ամէն մէկ անդամներուն իմ յարգանքս հա-
ւաստիքը իմ աջակցութիւնս ամէն պարագայի մէջ,
որ ատեն որ պէտք ունենան, նուիրելով իմ կողմանէ
իբր փոքր քաջակերութիւն 500 լէշ, մեր սիրելի սկա-
ուտներուն:

Մ Ա Ր Մ Ն Ա Կ Ր Թ Ա Կ Ա Ն

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

ՄԵՐ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՆ ՄԷՉ

Ֆիզիքական գաստիարակութիւնը որուն
մասին յաճախ ակնարկութիւններ կ'ընէինք
մեր նախորդ յօդուածներուն մէջ, ենթադ-
րուածէն շատ աւելի լուրջ և կարեւոր հարց
մըն է:

Գաղաբակիրթ ազգերը երբեք չեն նկատած
զայն սոսկ միջոց մը մարմինը զօրացնելու, ըն-
դունած են նաև բարոյական գաստիարակու-
թեան սատարող գլխաւոր ազգակներէն մին:

Ճիշդ է որ մենք ալ վերջերս մեր կրթա-
բաններուն մէջ շարժական մի քանի պահ
յատկացուցած ենք ֆիզիքական գաստիարակու-
թեան մարզանքին, սակայն առանց ինքնա-
խարէութեան կրնանք ըսել թէ մեր բմբունած

ձեւ մարզանքն աւելի յաճախ ձեռի համար
եղած է քան բուն իսկ նպատակին:

Թրքական բանակին մէջ հապճեպ կերպով
պատրաստուած և ծառայած կարգ մը երիտա-
սարդներ իրենց տեսած ու սորված կարգապա-
հական փորձերն ու շարժումները բաւ համա-
րելով՝ կը յաւակնին իբր ուսուցիչ աւանդել
զպրոցներուն մէջ մարմնամարզի դասեր:

Կասկած չկայ որ կարգապահութեան ա-
ռաջնորդող ընտիր միջոցներ են ատանք, բայց
իբր ֆիզիքական գաստիարակութեան դասեր
երբեք ներելի չեն այդ շարժուձեւերն ուսու-
ցանել անխտիր նախակրթարաններու ամէն
տարիքի և հասակի տղոց:

Կը կարծենք որ այս ուղղութեամբ շատ
աւելի օգտակար դեր մը կրնայ խաղալ Հ. Մ.
Ը. Մ. ը եթէ գործակցութեան համար համա-
ձայնութեան մը գայ ուղղակի վարժարանաց
տեսչութեանց հետ:

Տրուած ըլլալով ֆիզիքական գաստիարա-
կութեան անհրաժեշտութիւնը տարակոյս չկայ
որ վարժարաններուն կողմանէ պիտի արժա-
նանայ Հ. Մ. Ը. Մ. ը սիրալիր ընդունելու-
թեան մը:

Թերեւս աւելորդ չըլլայ թարգմանարար
յառաջ բերել հոս Անգլիական վարժարանաց
համար կրթական նախարարութեան պատրաս-
տած Հրանակոյրքիւն անուն գիրքէն ընտիր էջ
մը նուիրուած՝ ֆիզիքական գաստիարա-
կութեան

«Ֆիզիքական գաստիարակութեան նպատակը
միայն առաւելաց մարմինը զարգացնել պէտք
չէ ըլլայ: Իր բոլոր նպատակներուն մէջ պէտք է
ծառայէ ան վարժեցնելու նաեւ զգալի ախտա-
ժուրեան եւ վնասականութեան:

«Պէտք է նպաստ մտնի նակակոնի ներքեւ
մարմնոյն շարժումներուն համազօրակցութիւնը
կատարելագործելու: Հասնելու համար ալ այս
նպատակին՝ չը բաւեր միայն լաւ կերակրել զը-
զաքը, մասնաւոր ջանք քափելու է նաեւ որ
անոնք՝ ներքին գործարաններ լաւ կատարեն իրենց
պատեօնը:

«Անհրաժեշտ է ուրեմն լուրջ ուշադրութիւն
դարձնել այն մարզանքներուն որ կ'ազդեն ըրն-
շառութեան եւ արեան շրջանի կանոնաւորու-
թեան: Ուսի կը հետեւի քէ ֆիզիքական գաստի-
արակութիւնը բովանդակելու է յայնօրէն բնա-
կան ազատ խաղերն, շարժումներն ու այն մար-
զանքներն որոնք նպատակ ունին մեծցնելու
կուրծքին տարրութիւնը, եւ զօրացնելու անոր
մասնները:

«Ապահովելու համար այ ֆիզիկական դաս-
տիարակութեան անմիջական արդիւնքը՝ պէտք է
լարասել ըլլայ:

«Անհրաժեշտ են երբեմն կարել, բայց զօրա-
ւոր շարժումներ, զբոսելու համար արեան շր-
ջանը եւ շնչառութիւնը: Եւ ասիկա օգտակար
միջոց մըն է արգարելու թէ՛ ուսուցչաց եւ թէ՛ ու-
սանողութեան համար:

«Կասկած չկայ որ սնունդի անբաւականու-
թեան եւ սկարութեան պատճառաւ կարգ մը սր-
դաններ անյարմար են զանազան փորձերու, առ
այս ուսուցիչ պէտք է կարող ըլլան որոշելու
թէ որո՞նք կրնան հետեւիլ առանց վնասելու ի-
րենց առողջութեան՝ մարզանքի ամբողջ ընթաց-
քին: Կան ուրիշներ այ որոնց արտաքին ընդհ.
երեւոյթն չի տեսնուիր խանգարուած առողջու-

թիւնը, սակայն մարզանքի դասէն անմիջապէս
վերջ որոշ կ'զգացուի անոնց վրայ սրտի բարա-
խում եւ յոգնածութիւն: Այս կարգի տղաք պէտք
չէ մասնակցին մարզանքի մինչեւ որ կարող բը-
ժիշկի մը կարծիքը չ'առնուի:

«Չափահաս աղջիկներու մարզանքն այ պէտք
է յանձնել կիսն դաստիարակներու: Մարմնակր-
թական դաստիարակութեան համար պատշաճ-
տեւիւր վարժունքները պէտք է յանձնուին մաս-
նակցական ծանօթութիւն ունեցող կանանց:

«Այս ամենորեայ անհրաժեշտ մարզանքները
կատարելու համար նիւթական ո եւ է դժուարու-
թիւն չկայ: Կրնան կատարուիլ անոնց դպրոցին
պարտէզին կամ բաց պատահաններով օգտաւն
սենեակներուն մէջ»:

Սիլուստար

Ռ Ո Ջ Մ Ե Ր Ի

Կ. ՊՈԼՍՈՅ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ ԱԹԼԷԹԻՔ ԵՒ ՖՈՒԹՊՈԼԻ ՄՐՑՈՒՄՆԵՐ

9 — 11 Յունիս 1922 Թագոթի «ՍԹԱՏՈՄ» մարզարանին մէջ

Պոլսոյ ախոյանութեան մարզական և ֆուտ-
պոլի տարեկան մրցումները տեղի ունեցան
Յունիս 9 ուրբաթ և 11 կիրակի օրերուն:

Ինչպէս որ Հ. Մ. Ը. Մ. ի կեդրոնը նախատե-
ւած էր և ժամանակին բողոքած, Թագոթի
նորարաց Սթասիոնը, հետի էր յարմար և պատ-
րաստուած գետին մը ըլլալէ ախոյանութեան
մրցումներուն համար: Մնաց օր թուրքերը, ա-
ռանց լուրջ պատճառի մը վերջին պահուն քա-
շուած էին, և այդպէսով ամիսներէ ի վեր ծրա-
դրուած խաղերը, չէին կրնար նկատուիլ Պոլ-
սոյ Ախոյանութեան Տարեկան Մրցումները, այլ
տեղակ մը մարզական հանդիսութիւն և ջու-
ցադրութիւն, զխաւորապէս հայ և յոյն, յե-
տոյ հրեայ մարդիկներու և զանազան աղգի
պատկանող դպրոցականներու և որբերու
միջեւ:

ՖՈՒԹՊՈԼԻ ՄՐՑՈՒՄԸ

Ախոյանութեան մրցումներու անյարմար մար-
զավայրի մը մէջ, հայ մարդիկներու իրական
արժանիքը չնստմացնելու համար, Հ. Մ. Ը. Մ. ի
կեդր. վարչութիւնը թէեւ օր մը առաջ որոշած
էր ֆուտպոլի մրցումներուն չմասնակցիլ, եթէ
իր կարգ մը առաջարկները չյարգուէին, սա-
կայն վերջին պահուն կարգ մը նկատումներով
որոշեց մասնակցիլ, և այդպէս Թուրքերու հետ
ֆուտպոլի մրցում տեղի ունեցաւ պակաս ու-
ժերով և երկու կողմերը հաւասար մնացին:
Մեր աղաքը անպատրաստից ելած էին զաշար

այդ պատճառով իրենց հակառակորդներուն դէմ
յաղթանակ մը տունելու կրկին և կրկին պա-
տենութիւններ կորսնցուցին:

ՄԱՐԶԱԿԱՆ ՄՐՑՈՒՄՆԵՐԸ

9 Յունիս 1922

Ուրբաթ օր ժամը 3ին սկսան մրցումները:
800 մեք վագֆ.— Ա. Եօնա Էմիլ, Բ. Ժ.
Վիրվիլիս, Գ. Ե. Մէնէլասու:

(Ժամանակ 2 վայրկ. 10 երկվ.)

Ուժ առած բարձր. ցատկել.— Ա. Բ. Գար-
թալի, Բ. Ս. Սինէմեան, Գ. Ս. Կրօպման:

(Բարձր. Ա. 1,65 մետր Բ. 1.62)

Երկար նետել.— Ա. Ա. Արէլեան, Բ. Կօս
Ժուլէվիլ, Գ. Ժ. Սըթիկեան:

(Հեռաւորութիւն 12.55 մետր.)

10,000 մեք վագֆ.— Ա. Թ. Բարուզօ, Բ.
Աթմանասիատի. Գ. Սօթիլի:

(Ժամանակ 36 վայրկ. 48 երկվ.)

Ուժ առած երկայն. ցատկել.— Ա. Հ. Գալ-
ֆայեան, Բ. Յ. Չալխասեան, Գ. Տ. Սթէրի-
օիտլօ:

(Հեռաւորութիւն՝ 5.80 մետր.)

Երեք քայլ ցատկել.— Ա. Հ. Գալֆայեան, Բ.
Յ. Չալխասեան, Գ. Կ. Փանոսեան:

(Հեռաւորութիւն՝ 11.88 մետր.)

Տեղի ունեցան 100, 200 և 400 մետր վազքի
և 110 մետր ցանկարշառի նախափորձեր: Յե-
տոյ չուան քաշելու փորձեր Հայերու և Յոյ-
ներու միջեւ: Միտիթարեան վարժարանի որ-
բերը տողանցք մը կատարեցին, ծափեր խլելով:

ԿԻՐԱԿԻ ՕՐՈՒԱՆ ՄՐՅՈՒՄՆԵՐԸ

11 Յունիս 1922

Կիրակի, կէսօրէ առաջ և վերջը, տեղի ունեցան մրցումներու շարունակութիւնը հոծ բազմութեան մը ներկայութեան:

ԿԷՍՕՐԷ ԱՌԱՋ

200 մետր վազք.— Հ. Աճէմեան, Բ. Վ. Թէրզեան, Գ. Քարքալիս:

(Ժամանակ՝ 24 1/5 երկայր.)

1500 մետր վազք.— Ա. Վէնսոան Սուֆիանու, (անգլ.) Բ. Եօնաս, Գ. Հ. Իսկէնտէրեան:

(Ժամանակ՝ 4 վայրկ. 24 3/8 երկվ.)

Կեցած երկայն, ցատկել.— Ա. Ս. Կոստիկեան, Բ. Հաճիփէթրօս, Գ. Մառուլիս:

(Հեռաւորութիւն 2.90 մետր.)

Կեցած բարձր, ցատկել.— Ա. Ս. Կոստիկեան, Բ. Եօրիկ Օմիտա, Գ. Մառուլիս:

(Բարձրութիւն՝ 1.39 1/2 մետր.)

Մարզական զանազան փորձեր տեղի ունեցան հրէական «Մագուպի» ի կողմէ. որմէ վերջ մեծ զննատեսութեան արժանացան Ամերիկ. նպատամատոյցի Պոյաճըգիւզի որբերու և որբուհիներու շուէտական մարզանքի փորձերը՝ Փրօֆ. Մանկոյի ղեկավարութեան տակ: Յետոյ էսայիան վարժարանի 25 աղջիկները յաջող փորձեր ըրին իրենց ուսուցչին՝ Պ. Ա. Քրիտեանի ղեկավարութեամբ:

ԿԷՍՕՐԷ ՅԵՏՈՅ

Ժամը 2,30 ին վերսկսան մրցումները: Ամէնէն առաջ ընդհ. տողանցք մը կատարուեցաւ, որուն առջեւէն կ'երթար Սէն Ժօզէֆի Ֆանիաու ը, յետոյ Էսանի աղջիկները, Պոյաճըգիւզի հայ որբուհիները, Սէն-Պընուայի և Սէն Ժօզէֆի աշակերտները՝ մարզական տարազով, Գուլէիի որբերը, Միսիթարեան վարժարանի աշակերտները, հայ, յայն և հրեայ մարզիկները և օրուան պաշտօնատարները:

ՄՐՅՈՒՄՆԵՐԸ

100 մետր վազք.— Ուրբաթի նախափորձերուն արդիւնքը եղած էր ճետեւեալը:

Հրանդ Աճէմեան և վահրամ Թէրզեան 12 1/8 փօթ Սիթալիտի և Արօսթօլօս Սիթանիցա 12 2/8:

Կիրակի վերջնական մրցումներուն առեւն ճամբայ հանող Պ. Ֆլօրիտիս, որ արդէն գէնքի գէշ ընտրութիւն մը ըրած էր, գէնքը քաշեց, սակայն կրակ չ'առած, Ստալիտի և Սիթանիցա ճամբայ ելան. Պ. Ֆլօրիտիս երկրորդ շարժումով մը գէնքը պայթեցուց, Թէրզեան տեսնելով որ մրցորդները կը շարունակեն իրենց ճամբան, ինք եւս ճամբայ ելաւ, Աճէմեան՝ որ կատարուած Սիթալիտի բացարձակ սըխային պատճառով վստահ կ'սպասէր Պրն. Ֆլօրիտիսի 2րդ. հարուած մըն ալ պայթեցնելով մրցորդները ետ հրաւիրելուն, երբ տեսաւ Թէրզեանի եւս մեկնելով իրեն բոլորովին առանձին մնալը գերմարզիկային ճիգով մը հակառակ 8-10 քայլ կորսուած ըլլալուն, ճամբայ ելաւ և շատ անշուն տար

բերութեամբ մը հասաւ սահմանագիծը: Ահա այս պայմաններուն տակ տեղի ունեցած Մրցումի մը առիթով Պ. Ֆլօրիտիս դժբախտարար իր պարտակաւնութեան բարձրութեան վրայ չը մնալով, արդիւնքը օրինական հաշակեցի Դատաւորներ բողոքեցին այս կարգադրութեան համար սակայն, հաշտարար դատաւոր պնդեց Պ. Ֆլօրիտիսի այս մասին ունեցած լիազօրութեան իրաւունքին վրայ: Հայ դատաւորները քանիցս դիտել տուին եղած ապօրինութիւնները և պահանջեցին կարճ վաղքերու պարագան մասնաւոր ուշադրութեան առնել, և եղած արդիւնքը օրինաւոր չ'ընդունեցան Ասոր հակառակ ժիւրին հետեւեալ արդիւնքը արձանագրեց. Ա. Սիթանիցա, Բ. Սիթալիտէս, Գ. Վ. Թէրզեան:

(Ժամանակ՝ 11 1/8 երկվ.)

Մ Ա Ն Ո Ւ Մ Կ Ե Տ Ե Ր

Ուրբաթ օրէն մինչեւ կիրակի, 100 մետրի սկիզբը:

Հ Ա Յ Ե Ր

Ուրբաթ օր	3 Ա.	3 Բ.	2 Գ.	26 կէս
Կիրակի »	3 Ա.	1 Բ.	1 Գ.	19 »
				Գումար
				45

Յ Ո Յ Ե Ր

Ուրբաթ »	3 Ա.	2 Բ.	3 Գ.	24 կէս
Կիրակի »		3 Բ.	3 Գ.	12 »
				Գումար
				36

Հ Ր Ե Ա Ն Ե Ր

Ուրբաթ »			1 Գ.	1 »
----------	--	--	------	-----

Ռ Ո Ւ Ս Ե Ր

Ուրբաթ »		1 Բ.		3 »
----------	--	------	--	-----

Օ Տ Ա Ր Ն Ե Ր

Կիրակի »	1 Ա.			5 »
----------	------	--	--	-----

5000 մետր վազք.— Ա. Քարուզօս, Բ. Աթանասեան, Գ. Եօնաս:

(Ժամանակ՝ 17 վայրկ. 15 երկվ.)

Սկաւառակ նետել.— Ա. Ս. Մկրեան, Բ. Ֆրանկաքիս, Գ. Արամ Արեղեան:

(Հեռաւորութիւն 34, 84 մետր)

110 մետր ցանկաւրու.— Այս ալ անցաւ բացարձակ անկանոնութեամբ կը մասնակցէին հայ մը և յայն մը: Սիթալիտի առեւն կրկին գէնքը կրակ չ'առաւ և երկրորդ հարուած մըն ալ քաշեց: Այս անգամ բուն պայթիւնէն առաջ մեկնեցաւ Պ. Արայ երամեան, որուն պատճառով Սիթալիտը պարտական էր նոր հարուածով մը մրցորդները ետ կանչել սակայն տեղի չունեցաւ «Ֆաուլ» և «Սիթօ» բացառանջութիւններուն վրայ, երամեան որ հիւսնայի արագութեամբ կը յառաջանար և իր մրցակիցէն 3 ցանկ անցած էր, քանիցս ետեւ նայեցաւ և այդ միջոցին իր մօտ գտնուող դատաւորի մը կողմէ գուրս հանուեցաւ իր ընթացքէն Պ. Ֆլօրիտիս կրկին անգամ պնդեց արդիւնքին օրինականութեան վրայ, հակառակ որ այս անգամ Մր. Ֆիլիպս և Ռօպէնսօն տրամադիր չէին այսքան բացայայտ երկրորդ սխալ մ'ալ մարտելու և փոզով ճըրտըններուն գաշտին վրայէն չը վերցուիլը կը հրամայէին իրենց վերջին խօսքը բտելու համար: Սակայն Պ. Ֆլօրիտիս քաջալերուած նախկին սխա-

լին, յաշտարար դատաւորին կողմէ մարտուելէն անմիջապէս վերջնել տուաւ զաշտին վրայէն ցանկերը, հակառակ այս մասին յոյն դատաւորներէն մէկուն իսկ բողոքելուն:

Այս անգամ հայ դատաւորները կրկին դիմեցին Մր. Ֆրիլիպսի և տեղւոյն վրայ իսկ դոճացում պահանջեցին, սակայն զոճացում չ'ստացան: Որովհետեւ՝ զաշտին վրայ ամբիջի կեանքի հակառակ ուղղութեամբ ոգի մը առտիճանարար կը տիրապետէր, արուած ըլլալով որ նոյն Սթամբուլը 200 մեթր վազքի ատեն ալ ունեցած էր տկարութիւն մը սողոց շարքը որոշելու առիթով երբ մինչև այդ և անկէ վերջ՝ փոքր թիւ քաշողը Բիստին անմիջապէս քովը կը կենար, 200 մեթրի առիթով չըջից իր այդ սովորութիւնը և նուազագոյն թիւը շահող Պր. Աճէմեանը կեցուց ամենէն զուրսի գիծը, հակառակ որ այս մասին ալ զիտողութիւն եղաւ իրեն Սթամբուլը պաշտօնակցին և հայ արձանագրողին կողմէ:

Այս ամէնքը պատճառ եղան որ հայ մարմինը քաշուի զաշտէն և չի հետեւի մնացեալ մրցումներուն:

Նիգակ ցեղի, — Ա. Պուրպուրօղլու, Բ. Չէչէչէթ (սուս), Գ. Ֆրանկաքիտ:
(Հեռաւորութիւն 44,15 մեթր)

Գրօսարժաւ. — Յոյներու և Հրեաներու միջև, Յոյները յաղթական: Տեղի ունեցան նաեւ ամբիջիկ պարեր և մարզանքներ:

Հայ մարզիկները կատարեալ կանոնաւորութիւնով շարժեցան, և խաղերու մաս առին մինչև կիրակի կէսօր: Կէսօրէ վերջ պատահած ցաւալի դէպքերը և անարդարութիւնները, հայ մարզիկներու վրայ գործեցին իրենց հակազդեցութիւնը: Այդ անարդարութիւնները զարմանուած չ'ըլլալուն, հայերը յաջորդ օրն իսկ զրկեցին հետեւեալ բողոքագիրը, ստորագրուած Հ. Մ. Ը. Մ. ի Արիքիկ յանձնարարութիւնի Ատենայեա Պ. Լեւոն Յակոբեանի կողմէ:

Պ Նախագահ
Կ. Պոլսոյ Տարեկան Աթլէթիկ և Ֆութպօլի Ախոյանութեան Մրցումներու Յանձնարարութիւն» Աստ

Տեք
Ստորագրալս, նախագահ Հայ Աթլէթիկ Ընկերակցութեան, պատիւ ունիմ ներկայ բողոքագիրը Ձեր նախագահած յանձնարարութիւն ենթարկել վերջին ամբիջիկ «հանդիպում» ներուն առթիւ:

Ա. — Նկատելով որ պաշտօնական յայտագրին 27րդ էջին վրայ իբր «ճամբայ հանող» Պ. Գարօ Շահինեանի անունը որոշապէս կ'երևայ և հակառակ ատոր, իրեն այդ պաշտօնին ճանաչումը մերժուած է և միայն Պ. Ֆրօրիսիսինքղինքին իրաւունք տուած է գործել իբր միակ «ճամբայ հանող», և այս վերջինը Պ. Շահինեանի հանդէպ տգեղ և անարդական վերարեւում մը ցոյց առած է, երբ ան փորձած է արդարացի զիտողութիւնները ընել:

Բ. — Նկատելով որ 100 մէթր վազքի ճամբայ հանելու առթիւ գործուած սխալին հետեւանքով մեր լուազոյն ամբիջիթը շահելու պատեհութիւնը կորսնցուցած է:

Գ. — Նկատելով որ հակառակ մեր դատաւորներու կողմէ կատարուած դիմումներուն թէ՛



Հայ մարզիկներու տողանցքը

Յանկարչաւին արքիւնքը ծանուցուեցաւ հետեւեալ կերպով, Ա. Սթամբուլցաս, Բ. Մարաս, Գ. Հաճի փէթրօ:

Յետոյ օրուան յայտագրին մնացեալ մասերը շարունակուեցան առանց հայերու մասնակցութեան:

400 մետր վազք. — Ա. Եօնաս, Բ. Սթամբուլցաս, Գ. Տիմօփուլուս:
(Ժամանակ՝ 56,50 երկվայրկեան)

Պոփամարսի փորձ՝ մը երկու ամերիկացի նուազներու միջև:

Չուան Բուեյ. — Հրէական «Մադալի» և յունական «Թաթալա»-ի միջև, այս վերջինը յաղթական:

Էջին վրայ իբր «ճամբայ հանող» Պ. Գարօ Շահինեանի անունը որոշապէս կ'երևայ և հակառակ ատոր, իրեն այդ պաշտօնին ճանաչումը մերժուած է և միայն Պ. Ֆրօրիսիսինքղինքին իրաւունք տուած է գործել իբր միակ «ճամբայ հանող», և այս վերջինը Պ. Շահինեանի հանդէպ տգեղ և անարդական վերարեւում մը ցոյց առած է, երբ ան փորձած է արդարացի զիտողութիւնները ընել:

Բ. — Նկատելով որ 100 մէթր վազքի ճամբայ հանելու առթիւ գործուած սխալին հետեւանքով մեր լուազոյն ամբիջիթը շահելու պատեհութիւնը կորսնցուցած է:

Գ. — Նկատելով որ հակառակ մեր դատաւորներու կողմէ կատարուած դիմումներուն թէ՛

երկու հատ ճամբայ հանող քննիչներ նշանակուին, իրենց առաջարկը մերժուած և 110 մէթր արգելարչաւի մէջ ևս ճամբայ հանելու սխալը կրկնուած և որուն հետեւանքով մեր ասթլէթներէն մին ևս տուժած է:

Դ. — Նկատելով որ վերի ամբողջ պարագայները դաշտի հաշտարար դատաւորին ուշադրութեան յանձնուած էին, սակայն դժբախտարար ոչ մէկ արժէք տրուած էր անոնց:

Ե նկատելով այն անասարկերութիւնը որ ցոյց կը տրուէր դաշտին դատաւորներու մէկ մասին կողմէ ասթլէթիք օրէնքներու կիրարկումին առիթով, զոր օրինակ Մր. Սթէֆընսի կողմէ նիզակը չափելու օրինական ձեւակիրպութենէ վերջ, թոյլ տրուեցաւ գործածել նիզակ մը որ օրինական երկայնութենէն 12 սանդիմեթր կարճ և նոյն համեմատութեամբ ալ պակաս կշիռ ունէր:

Զ. Եւ վերջապէս նկատելով որ, թէեւ մեր ներկայացուցիչները կրկնակի գիտողութիւններ բրած էին մարզադաշտի վիճակի և մանաւանդ երկար արչաուղիներու մասին ընդհանուր կերպով, առարկելով որ խնայանութեան օրինական արդիւնքները կարելի չէր ձեռք բերել նման պայմաններու տակ, և հակառակ մարզարանի արհոյժ կողմէ եղած հաւաստումներուն՝ դաշտին վրայ ամենաթեթեւ յարդարում չէր եղած և որուն հետեւանքով «հանդիպում»ը սեղի ունեցաւ գեանի մը վրայ որ ասթլէթիք խաղերու օրինական սահանջները չէր գոհացներ, ինձ պաշտօն տրուած է յայտարարելութէ՝ Հայ Աթլէթիկ Միութիւնը չի կրնար ճանշնալ իր օրինական «Տարեկան Պոլսոյ Աթլէթիկ և Ֆութպօլի Ախոյանութեան Մրցումներ»ուն արդիւնքը և թէ մեր մաս առնողները ստիպուած են չընդունիլ ո՛չ մրցանիշները և ո՛չ ալ մրցանակները, որ շահուած են մեր ասթլէթներու կողմէ:

Հայ Աթլէթիկ Միութեան նախագահ
ԼԵՒՈՆ ՅԱԿՈԲԵԱՆ

* * «Օրիէնթ Նիւզ»ի, սփորթի աշխատակիցը. սփորթմէն ստորագրութիւնով նախապէս քննադատած էր հայ մարզիկներու վարմունքը. վերի բազմաթիւ նամակը, յիշեալ թերթին մէջ դրուելէ վերջ, նորէն մեզ կը պատասխանէ, բնելով թէ «Հայերու ուղիղ ընթացքը պիտի բլլար շարունակեյ խաղերը բողոքելով հանդերձ». յետոյ «Պոլսոյ մէջ սբոր բարձր մակարդակի մը հասցնելու համար — կը թելադրէ մեզ — որքան շուտ որ կարելի է, հետեւիլ

սբորթմէնութեան արեւմտեան գաղափարներուն»:

«Օրիէնթ Նիւզի պր. Սբորմէնը, երբ կ'ըսէ թէ «խաղերը պէտք է շարունակէինք բողոքելով հանդերձ» հակառակ իր կամքին թերեւս, ստակէտով մը կ'ընդունի թէ «բողոքելիք բան մը գոյութիւն ունէր»:

Արդ, հայ մարզիկները, առանց խոշոր յաւակնութիւններ ունենալու Սբորմէնութեան մասին, նախ շնորհակալութիւն կը յայտնենք Պր. Աշխատակցին — որ պէտք է սնանձ բլլայ «սբորմէնութեան արեւմտեան գաղափարներով» — իր ըրած որացաւ թելադրութիւններուն համար, յետոյ համարձակութիւնը կ'առնենք յիշեցնել իրեն, որ Պոլսոյ ինչպէս Չինաստանի, նոյնպէս և առաւելագէս Արեւմուտքի մէջ ալ, սբորի հիմնակէտն է Արդարութիւնը և Անկողմնակալութիւնը:

Ահա թէ ինչպիսի սկզբունքներով, Պոլսոյ մէջ, կամ ուրիշ տեղ մը սբորի մակարդակը կրնանք բարձրացնել, և ինքզինքիս ճշմարիտ սբորմէններ անուանել:

Հ.Մ.Բ.Մ. ի կեդրոնի վարչութեան հետեւեալ շրջաբերականը զրկած է մասնաճիւղերուն և միութիւններուն:

* * Հ.Մ.Բ.Մ. ի կեդրոնական վարչութիւնը իր ընդհակալութիւնը կը յայտնէ այն բոլոր հայ մարզիկներուն եւ ֆութպօլիստներուն որոնք մասնակցեցան Ֆունիս 9 ի եւ 11 ի «Իջազգային Արիքի Մրցումներուն, միեւնոյն ասեմ իր գոհունակութիւնը կը յայտնէ անոնց ցոյց տուած կարգապահ ոգիին, որ իրապէս պատուաբեր երբէ՛ ազգին եւ թէ մասնաւորապէս հայ արիքներուն համար:



Սկաւառակ ցետոյ երեք մարզիկները
Պ. Պ. Ա. Ս. Մկրտեան, Բ. Ֆրանկաֆիս,
Գ. Ա. Արէլեան,

* * Նիւրըն, Շուէտի տէղաթիւնի շամբիոնու-
թիւնը շահած է 3,472 կէտով, և Էհետեւեալ ար-
դիւնքները տուած, 6,79 մեթր երկույնութիւն
ցատկել. 50,17 մեթր նիզակ. 24 4/10 երկ. էն 200
մեթր վազք. 37,97 սկաւառակ. 4, 41 վայր.
1500 մեթր վազք:

* * Անդլիոյ շամբիոնութիւնները այս տարի
շատ հետաքրքրական պիտի ըլլան օտար մաս-
նակցողներու շնորհիւ: Ֆինլանտայի կողմէ
պիտի մասնակցին՝ Նիւրմի 1 և 4 մղոնի, Գօ-
լէնմայնէն 4 մղոնի, Բէլթընօն և Ճօնլնսըն
նիզակի, Նիթթիմա և Բօռնօլլա երկաթի. Թիւլօ
երկայնութեան և Ուիլէն 400 մեթր վազքի և
400 մեթր արգելքի: Շուէտը կը ներկայացնեն
Ռիպէսկ (ցող), Ճանսըն (երկաթ), Բէլթէս-
սըն (բարձր.), Պժօռնմէն Բէլթէսըն (երկայն.),
Նորվէկիացի՝ Հօֆ (ցող) և Սթէֆէնսըն (100 և
200): Զուիցերիացի, Տանխարզացի և Ֆրանս-
սացի կարող մարդիկներ եւս պիտի մասնակցին:

* * Պէլճիկայի շամբիոնութեան միջոցին Բու-
էլիը և Պելճիոյ ցողով ցատկելու ուէզօւր որ 3,49
մեթր էր կը կորէ 3,535 մեթր ցատկելով:

* * Լոնտօնի մէջ տեղի ունեցաւ 600 ետր-
տայի (5/8,40 մեթր) մրցման մը մէջ Սթէլլըստ
առաջին կելլէ 3/5 եւս ձգելով Մութէնը:

Պ Օ Ք Ս

* * Թէտ Գիտ Լէվիս Գառբանթիէի վերջին
զոնը, որ Անգլիոյ կէս-միջակ, միջակ, և կէս
ճանր բաժանու մեկու շամբիոնն է. Անգլիոյ
միջակ ճանրութեան շամբիոնութեան համար
մրցում մը բրաւ Աւստրալիացի Ֆրանսի Պրոնսի
հետ, սակայն Պրոնս չի կրցաւ շամբիոնու-
թիւնը խլել Լէվիսէն, որ 11 րդ. առաւնտին Նօֆ
առք ըրաւ իր հակառակորդը Պրոնսը՝ ան 2
վայրկեան մարտ մնաց:

* * Վերջերս Ֆրանսայի մէջ Գառբանթիէի
հակառակորդ մը գտնելու մտօք մրցում մը կազ-
մակերպած էին Ալէնէկայի խորշիկ Պաթլինկ Սի-
քիի և Ֆրանսայի ճանրեցու շամբիոն Նիլսի միջեւ,
իրաւ որ Սիքի յաղթական ելաւ, սակայն եղած
մրցումէն՝ այնպէս կ'երեւի որ ոչ մէկը և ոչ
միւսը Գառբանթիէին հետ մրցելու կարողու-
թիւնը չունին և վստահ ենք որ եթէ Սիքի-
Գառբանթիէ մրցումը իրականանայ Գառբան-
թիէի համար փորձ մը պիտի ըլլայ այդ և ոչ
թէ մրցումը:

* * Վերջապէս այսքան սպասուած Տէմզի-
Հառօի Ուիլս մրցումը իրականանալու վրայ է
երկու հակառակորդներու մեկամիկ ներք ընդու-
նած են, միայն տեղը և գումարը կարգազրել
կը մնայ: Երկու հակառակորդներու մասին

ճանօթութիւնը՝ մրցման կատարելապէս ճշգուե-
լէն վերջ պիտի տանք:

* * Վերջերս ամերիկայի մէջ երկու աշխարհի
շամբիոններու միջեւ մրցում մը տեղի ունեցաւ,
մէկը Ճէք պրայթըն կէս միջակ ճանրութեան
և միւսը Պէննի Լէօնաու րեքեռ ճանրութեան
շամբիոն, վերջինս արքիւլուած հարուած մը
տուած ըլլալուն համար պարտուած նկատուե-
ցաւ:

Միւս կողմէ ժօտերս ուրիշ մրցում մը տեղի
պիտի ունենայ Ճօէ Լինչի և Ճօննի Պրֆի մի-
ջեւ աշխարհի ալլոր ճանրութեան շամբիոնու-
թեան համար որ Ճօննի Պրֆիի կը պատկանի:

Ահաւասիկ Աշխարհի և Եւրոպայի պօքսի
շամբիոններն ու ճանրութեանց սահմանները:

Մ Ճ Ե Ղ Ն Ե Ի

51,800 քիլօ: Աշխարհի և Եւրոպայի շամ-
բիոն Ճիմմի Ուայլա Անգլիացի:

Ա Ք Լ Ո Ր Ն Ե Ի

51,800-53,521 քիլօ: Աշխարհի շամբ. Ճօննի
Պուֆ Ամերիկացի. Եւրոպայի շամբիոն Շառլ
Լըստ Գրանսացի:

Փ Ե Տ Ո Ւ Ր Ն Ե Ի

53,521-57,152 քիլօ: Աշխարհի շամբ. Ճօնի
Քիլպըն Ամերիկացի. Եւրոպայի շամբ. Էօժէն
Քուիքի Ֆրանսացի:

Թ Ե Թ Ե Ի Ն Ե Ի

57,152-61,235 քիլօ: Աշխարհի շամբ. Պէննի
Լէօնաու Ամեր. Եւրոպ. շամբ. Էննի Ռիս Անգլ.:

Կ Ե Ս Մ Ի Ջ Ա Կ Ն Ե Ի

61,235-66,680 քիլօ: Աշխարհի շամբ. Ճէք
Պապթըն Ամ. Եւրոպ. շամբ. Բիէթ Հօպէն Պելճ.:

Մ Ի Ջ Ա Կ Ն Ե Ի

66,680-72,574 քիլօ: Աշխարհի շամբ.
Պուրան Տօռնէյ Ամերիկացի. Եւրոպայի շամբ.
Թէտ քիտ Լէուիս Անգլ.:

Կ Ե Ս Ծ Ա Ն Ր Ն Ե Ի

72,574-79,378 քիլօ: Աշխարհի և Եւրոպ.
շամբ. Ժօսթ Գառբանթիէ Ֆրանս.:

Մ Ա Ն Ր Ե Ի

79,378 քիլօյէն վեր: Եւրոպ. շամբ. Ժօսթ
Գառբանթիէ Ֆրանս., Աշխարհի ընդհանուր
ճանրութիւններու շամբ. Ճէք Տէմզի Ամեր.:

Վ Ր Ի Պ Ա Կ Մ Ր Ց Ո Ւ Մ Ի

Հայ Սկաուտ թիւ 20 էջ 311 պատկերէն
Թիւ 24 երբ կը նշանակեն (Վտանք, Պատերազմ)
թիւ 25 ր (Այր Մարդ) թիւ 26 (Կիւն): Թիւ 55 միւն
կը նշանակէ եւ ոչ թէ ծայն: Թիւ 84 միւնի նշան է
և կը նշանակէ Տարի:



Հեղինակ՝ EMILIO SALGARI

Իրաւ. թրգմ. Հ. ՅԱՆՈՒՍ ԲՈՍՊԵՅԵՂՅԱՆ

ԺԴ. ԼԻՃ ՄԸ ԲՈՑԵՐՈՒ ՄԷՋ

— Լճին մէջ թափող քանի մը աղբիւրներէ:
 — Ասկայն, ջուրի այսքան ընդարձակութիւնը քարիւղով ծածկելու համար հազարաւոր, միլիոնաւոր լիտր քարիւղ կ'ուզէ:
 — Ամերիկան ընդերներու մէջ քարիւղի ահագին աղբիւրներ կը պարունակէ, այնպէս որ զարեւոյ բաւական է բոլոր աշխարհի պէտքերուն համար:
 — Կորսուած աղբիւր մըն է սա:
 — Պիտի դայ օր մը, մի՛ տարակուսիր, զայն գտնող մը պիտի ըլլայ:
 — Գտնողը միլիոնատէր պիտի ըլլայ:
 — Բոլոր Քարիւղի իշխանները, ինչպէս կը կոչեն Ամերիկացիք, միլիոնատէրներ զարձան, շատերը սակայն կարճ ժամանակի մէջ կործանեցան: Այս իշխաններէն (Oil Princes) մէկը կը հանչնամ, որ առանց աշխատութեան գիզած այդ միլիոնները, քիչ տանուան մէջ կերաւ փնացուց կ հիմայ գրունագան մըն է: Աւրիչ մը, այլի մը որդի, քսան ամսուան մէջ շուայտութեամբ կերաւ ու թ մշտիտնէն աւելի:
 — Գտնուած աղբիւրները բազմաթիւ են:
 — Մատի վրայ կարելի է համբել զանոնք. սակայն վերջերս զսան նաև Գանատայի, Բէնարիվանայի և Վիրճինայի մէջ:
 — Առաջին աղբիւրը ո՞ր գտնուեցաւ:
 — Կարեւորներէն առաջինը գտնուեցաւ Դիգիւզիլիլին մօտերը 1859 ին: Այն ամիս շարունակ հայթայթեց օրական զրեթէ 4500 լիտր քարիւղ, որ տասը տակաւ ըսել է: Այսօր, սակայն, ջրհորները օրական կը հայթայթեն 10,000 էն մինչեւ 12,000 տակաւ քարիւղ:

— Այնքան որ ամբողջ գաւառ մը կ'ողողէ: Որքան տակաւ կը գրկուի:
 — Անցեալ տարի, որ է 1868 ին, Անգլիոյ կը ներմուծէր 400,000 տակաւ. Պրէմ գրեթէ 350,000, գրեթէ նոյնչափ ալ Քորբ և ճիպրայլար. Ֆրանսա 292,000, վեր վար մէկ ու կէս միլիոն տակաւ:
 — Թէ որ այս ընթացքով շարունակեն, քանի մը տարուան մէջ աղբիւրները պիտի ցամբին:
 — Այն ատեն քարիւղի պէտք պիտի չունենան: Անտարակոյս կրկգրական լոյսը անոր պիտի յաջորդէ: Բաւական ատեն հոն կեցած շաղակրատեցան ծխելով, յետոյ, երբ խաւարը տիրեց լայնածաւալ կոնաձեւին մէջ, սկսան քաշել կղզեակիր խորտորտ ափունքէն: Տասը վայրկեանէն շոգեմակոյկ հասան որուն մօտ Ս'Քոնոր և Պարթըն կ'եռացնէին խոշոր սանը, պոյտերը և սաները:
 — Ի՞նչ ճիտութիւն, գոչեց երկրաչափը ժպտելով, և ի՞նչ բուրումն:
 — Չեղի փառաւ՝ որ կերակուր մը պատրաստեցինք, ըսաւ խառնածինը՝ կրակին փչելով և պոյտերուն ու սաներուն մէջի կերակուրը խառնելով:
 — Կրնա՞նք կերակուրի ցանկը տեսնել:
 — Եթէ խոհարարը թոյլ տայ:
 — Անշուշտ, ըսաւ իրլանտացին, որ ընկերոջմէն նուազ զբազմ չէր:
 — Ահաւասիկ, բրինձով չոր ոլոռն, եռացած խոզենի՝ քացախի մէջ կազամբով, միս՝ լուբիայով, մուխի բոնուած հարինկ ձուկը, ձէթի մէջ եփած քնն, չոր պտուղներ, և ամենալիքը Բոնիկի մը:
 — Ճնկելու բան չկա՞յ, հարցուց Մորկան:
 — Պարթըն չգատասխանեց: Դու ի՞նչ բարձրացու-

ցած կը դիտէր խառնարանին կոնաձեւը՝ որ մեռնող արեւու վերջին ճառագայթներէն լուսաւորւած էր:

— Խոստում, խոստում, գոչեց: Սըր ձօն ձեզի կատարեալ սեղան մը պիտի տամ:

Ոգոյ մէջ սուր ձայն մը կը լսուէր՝ որ երագորէն կը մօտենար: Թռչուններու իրական ամոյ մը կ'իջնէր կղզեակին վրայ:

— Հրացան մը պոռաց Մորկան:

Պարթըն սրացաւ դէպ ի շոգեմակոյի: Յափշտակեց հրացանը, գնդակիկներով լեցուց, ամպին նշան առաւ ու կրակեց:

Թռչուններէն երկվեցեակ մը թափթփեցան կղզեակի ժայռերուն վրայ, մինչդեռ միւսները՝ այդ բոմբուէն զարհուրած երագարար կը բարձրանային:

— Խոստում: Լուրս, հուրս, գոռաց Օ'Քոնոր:

Յանկարծ, կղզեակէն՝ հինգ կամ վեց հարիւր մեզր հեռուն լճին երեսը բարձրացաւ կարմիր բոց մը որ անհաւատալի երագութեամբ տարածուեցաւ:

— Թնդանթի անէ՛ծք, գոչեց խառնածինը դիակի մը պէս գոյնը նետելով՝ ինչ պատահեցաւ:

— Քարիւղը բռնկեցա՛ւ, գոռաց Սըր ձօն: Դէպի շոգեմակոյի, շոգեմակոյի վազե՛նք:

Ամենքն ալ վազեցին դէպ ի Հուսաբար, բայց արդէն շատ ուշէր հեռուները բացուել երթալ: Բոցը՝ պաշարած էր կղզեակը ու կը շարունակէր տարածուել ու բարձրանալ:

— Կորսուած ենք, պոռաց Մորկան:

— Շոգեմակոյիը ցամաք քաշե՛նք ու վառօթը սպասե՛նք, գոռաց Սըր ձօն:

Ութ կորովի բազուկներ Հուսաբարին փակելով սարսափելի ցնցումով մը քսչեցին ցամաքի վրայ: Եւ անմիջապէս երկրաշարժը ընկերներուն հետ միասին վառօթի սնտուկները մէկգին տարին, յափշտակեցին օդային (Rouquayrol^(*)) մեքենաները զորս ակնթարթի մէջ կան սկիւն նետեցին:

Մորկան ջուրի տակառի մը յատակը կտորեց, թափխեց չորս խոշոր ծածկոցներ և ընկերներուն բաժնեց մէկ մէկ հատ, յետոյ ամէնքն ալ մազլեցեցան կղզեակի գաւակին վրայ միասին տանելով վէճքերն ու պաշարը:

Փամանակն էր: Լիճը՝ մէկ ծայրէն միւսը ծածկուած էր՝ բոցի ծփուն ծուէններով որոնք սաստիկ կը լուսաւորէին ընդարձակ կոնաձեւը: Հրաշալի, չտեսնուած սեսարան մըն էր, և միանգամայն սարսափելի: Հազարաւոր ու հազարաւոր փայլակներ օձապոտոյա գալարումներով կը բարձրանային ու կը ցածնային, ոմանք կարմրաբոց, ուրիշներ սպիտակ և կապտագոյն, կրակէ ծով մըն էր ան, իրական դժոխք մը: Սեպտեւ ու գարշահոտ թանձր

(*) Rouquayrol թիթեղապատ սնտուկ մըն է՝ ճնշուած օդով լեցուն և որ պայուսակի մը նման կոնակ կ'առնուի: Մասնաւոր գործիք մ'ունի վրան, որ ճնշուած օդը կարելի կ'ընէ բնական չափով մարդուս թոքերուն մէջ խրկելու, և կոմայէ երկու նուրբ կտորներէ ձեւացած՝ արտաքին պղտիկ զբռնակէ մը գուրս կ'ելլէ ներշնչուած օդը: Այս օդը՝ մարդուս բերանը կը հասնի խուլոս խողովակի մը միջոցաւ որ ունի պղտիկ սեղմիչ մը:

ամոյ մը կը ծփար այդ բոցեղէն լեզուներուն վրայ և կոնաձեւի պատերուն քսուելով գէպ ի վեր կը բարձրանար: Թռչուններ, սուր ճիւղեր արձակելով՝ սարսափահար իրենց բոյներէն ու թառերէն կը փախչէին:

Սըր ձօն, Մորկան, Օ'Քոնոր և Պարթըն՝ լաւ մը փաթթուած ջրաթաթաւ վերմակներու, ու քովէ քով սլուած՝ հիացմամբ ու սահմուկած կը զիտէին այդ սեսարանը: Չէին խօսեր, բայց ուժով ուժով իրարու ձեռքերը կը սլմէին՝ մէկ մէկու հաղորդելու համար իրենց մտածութիւնը, իրենց զարմացումը, իրենց տազնապը ու սարսափը:

Երթալով կրակէ ծովը ընդլայնեցաւ՝ լիճը լեցունող ու պարպող գետերու մէջ ալ սահելով: Չարհուրելի ջերմութիւն մը տիրեց կոնաձեւին մէջ որուն որմերը տաքութենէն ձերմկեցեր էին: Կարծես հին հրաբուխը յանկարծ նորէն արթնացած ու հրաշէկ լախներով լեցուած էր:

Բարեբախտաբար, բոցերը տասներկու մեզր բարձրանալէն, լճին ջուրը կրկին ու կրկին ետացնելէն, վազեմի հրարուխին որմերը ծխտեղէն ու խոռովելէն յետոյ, վառելանիւթի պակասութենէն սկսան ցածնալ:

Լիճը թափող գետը մարեցաւ, յետոյ լճին հիւսիսակողմը, բոցերը միշտ աւելի ցածնայով, ու կղզին ազատ ձգելով քաշուեցան և աներեւութացան լճէն դուրս ելլող գետի ստորերկրուղիին մէջէն, յանի մը վայրկեան եւս տիտուր փայլով մը լուսաւորուեցաւ իր պատերուն ու սիւներուն անճոռնի կազմը ցոյց տալով:

ԺԵ. ԱՄԵՐԻԿԱՅԻ ՆԱԽԿԻՆ ԲՆԱԿԻԶՆԵՐԸ

Երկրաշարժը և ընկերները ծարաւէն կը մեռնէին և զգեստը ու մարմինը խանձոտած էին, վերջին բոցը աներեւութացածին պէս՝ կ'ուզէին (Ռուքայրոլ) օդային մեքենաներէն ազատիլ, ու վազել ջուրի տակառներուն մօտ: Սակայն հսկայ կոնաձեւին մէջը տատանուող ծուխի կոյտերը և ժայռերէն ցայտող զարհուրելի տաքութիւնը, զիրենք ստիպեցին զեռքի մըն ալ սպասել՝ շնչահեղձ ըլլալու փորձանքին մէջ չիյնալու համար:

Կղզեակին կատառը խմրուած, թանձր խաւարէն չըջապատուած, աչքերնին գէպ ի խառնարան սեւեռուն, սրտհատնումով աստեղազարդ երկնքի բացեւելուն կը սպասէին: Վերջապէս գարշահոտ ծուխամպը բարձրացաւ, հազիւ տեսանելի՝ պղտիկ լուսաւոր կէտ մ'երեւցաւ, յետոյ ուրիշ մը ապա երբորդ և ի վերջոյ գեղեցիկ աստղազարդ երկնքի կտոր մը: Լին հրաբուխը ազատ էր և բերնէն շնչելի մաքոր օդ կ'իջնէր:

Նախ երկրաշարժը, յետոյ Մորկան, Պարթըն և Օ'Քոնոր Ռուքայրոլները մէկգի առին, բայց հազիւ թէ շնչելու համար բերաննին բացին, կարծեցին որ շնչահեղձ կ'ըլլան: Կոնաձեւը փոստի նման տաքցած էր, օգն ալ այնքան տաք էր որ այրեց խեղճերուն բերանը ու կոկորդը:

— Կը խղրուէ՛մ, գոչեց Պարթըն, խղզուկ

ձայնով:

— Չ՞ւր, չ՞ւր, պոռաց Ս' քոնոր:

Մորկան խոյացաւ ժայռերէն վար, վաղեց ջուրի սակաւին՝ զոր քիչ առաջ բացած էր ու զեռ քանի մը լիզը ջուր կը պարունակէր, և բերաւ ընկերներուն:

Մին միւսէն յետոյ գլուխնին ձեռքերնին խոթեցին այդ ջուրին մէջ և մարմիննին թացցուցին:

— Ո՞հ, կը շնչեմ, գոչեց Ս' քոնոր Անիծեալ լիճ, երբէք չէի յուսար մորթիս ազատել:

— Եթէ գիտնամ անոր կրակ տուողը, կը կախեմ զայն, ըսաւ Պարթըն:

— Հրացանիդ խծու՛ճը եղաւ, ըսաւ Սըր ձօն:

— Ո՞հ, սատանա՛յ խռովածի մը համար քիչ մնաց որ ընկերներս խռովէի:

— Երթանք շոգեմակոյղը այցելինք, ըսաւ Մորկան:

Սըր ձօն և ընկերները բլրակն իջան և ուղղուեցան դէպի ափը: Հուսախաբ չէր վնասուած թէպէտ և բոցերը երբեմն երբեմն զայն լղեր էին, սակայն ջուրի պաշարը սպառած և մնացած անուխը բռնկած էր: Մորկան փութաց զայն մարեր:

— Հա՛պա մեր կերակո՞ւրը, ըսաւ Ս' քոնոր:

— Այրեր է, պատասխանեց Պարթըն: Ի՞նչ զըմբախտութիւն, և այնքա՛ն աշխատեք էի:

— Ս' քոնոր ուրիշ պիտի պատրաստէ, ըսաւ Սըր ձօն. մենք ալ լճին չորս կողմը այցելինք:

— Կ'ընդունիմ, ըսաւ Պարթըն:

Երկու որսորդներ և երկրաչափը շոգեմակոյղ մտան ու ձեռք առին թիերը, մինչդեռ Ս' քոնոր անմիջապէս ուրիշ կերակուր պատրաստելու կը ձեռնարկէր:

Հասանքը բաւական տեղար էր և դէպի հարաւ կը քէր, ուր կը բացուէր մեծոյի սիւներու վրայ բռնուած խոշոր գետնասորահճ մը:

Երկրաչափը դեկին քով նստելով, Հուսախաբը դէպի հարաւ հարաւ-արեւմուտք ուղղեց՝ յուսալով այդ կողմը գտնել շոգեմակոյղ մտանցներու ծովափ մը: Խոր լուծիւն մը կը տիրէր կոնաձեւին մէջ ուր հրդեհը մարած էր: Հազիւ հող կը լսուէր Հուսախաբի ցոռկին ջուրը ձեղքելը և թեւհակներուն հողբինը: Այ մի թռչունի ձայն, ոչ մի ջուրի կաթիլ այդ բարձր ժայռերէն, ոչ մէկ բղբուն միջատի:

Սըր ձօն ակնարկ մը տուաւ շուրջը: Մարած հրարուխի խռոնարանին վերեւ աստղերը կը փայլէին, և կղզեակին վրայ բոց մը կը վառէր՝ կարմիր ներկելով ժայռերը ու զայն շրջապատող ջուրը: Այդ կրակին մօտ՝ որ կայծեր էր նետէր, կը տեսնուէր կորիճ նաւաղը որ սանին և պոյտերուն վրայ ձուած բոլորովին՝ կերակուր պատրաստելու զբաղած էր:

Երեք քառորդ ժամ շոգեմակոյղը յառաջից առանց պատահարի, յետոյ թեթեւ բախում մը զգացուեցաւ: Մորկան լամբարը բարձրացուց ու գուրը երկնցաւ:

— Լճեզե՞րքը հասանք, հարցուց երկրաչափը:
— Ժայռ մըն է, պատասխանեց մեքենավարը:
Լճեզերքը աւելի վար է:

Շոգեմակոյղը զարձաւ ժայռին քովէն, անցաւ դուրս ցցուած սեւածայր պղտիկ խաւրակներու մէջէն, և բաւական բարձր, բայց մերձեցաւ փունքի մը զարնուեցաւ:

Պարթըն՝ ժայռի մը ծայրին կապեց շոգեմակոյղը և երեք մարդիկ՝ լապտերներ, բրիչներ ու տապարներ առնելով դուրս ելան ասպառափի մը գագաթը:

— Բարձրանա՛նք, ըսաւ Սըր ձօն:

Չեռ քով ոտքով իրարու օգնելով մագլցեցան լճափին բարձրութիւնը, և դէպ արեւելք ուղղուեցան՝ դետինը քննելով և ուշադրութեամբ կոխած տեղերնին նայելով, ձեղքուածքի մը, կամ աւելի ահաւոր, անդունդի մը մէջ չիլնալու համար:

ձամբան՝ ժայռուտ և խոշոր սեւ քարերով լեցուն էր, և հոս հոն լայն ձեղքեր կը տեսնուէին: Պղտիկ անասունով ալ չկար, նոյնիսկ մուկ մը, բոյս մը, կամ նոյն իսկ սունկ մը չէր տեսնուէր՝ որոնց ստեղծ կը հանդիպէին խոնաւ քարայրներու մէջ: Միայն կը լսէին ջուրի մրմունջը և քաջ իրջանտացիին ձայնը:

— Ի՞նչ գէշ տեղ, ըսաւ Պարթըն. ինքզինքս դերիզմանի մը մէջ կը կարծեմ:

— Հանքածուխի հետք մը կը նշմարե՞ք, հարցուց Մորկան երկրաչափին, որ ստեղծ կը ձուէր հողը զն ելու համար:

— Ոչ մէկ մինչեւ հիմայ:

— Կը յուսա՞ք:

— Ոչ չեմ բսեր:

Ահագին ասպառափի մը բոյսորաբար շրջեցան ու դէպի հիւսիս շտաջացան՝ ձեղքուածքի մը երկայնութեան հետեւելով որ բաւական խորունկ էր: Տասնըփնոց կամ քսան քայլ առած էին, երբ Պարթըն երկրաց և զարմանալի ճոնչլիւնով յանկարծ բացուող ծակի մը մէջ ինկաւ մինչեւ ձուսկերը:

— Օգնու՛թի՛ւն, պոռաց:

— Ի՞նչ ունիս, հարցուց Սըր ձօն վաղելով:

— Հողը փլու ոտքերուս տակ, բայց... հող չէ ասիկայ:

Չեռքերը կռթնցուց, ոտքերը ազատեց, ապա ձուսեցան ծակին մէջ լապտերին լոյսը հոն բռնելով: Աւ հիշ մ'արձակեց:

— Ի՞նչ տեսար, հարցուցին Մորկան և երկրաչափը:

— Ոտքերուս ներքեւ բացուող ժայռ չէ, փայտէ տախտակ մը:

— Անկարելի է, պատասխանեց երկրաչափը:

Մտեցաւ ծակին, ու մեծ զարմանքով տեսաւ որ՝ կէս մը թագուած տախտակ կար: Չեռքը ծակէն ներս խոթեց ու կակուղ բան մը զգաց:

— Փորե՛նք, ըսաւ ան:

Շարունակելի

Վարիչ-խմբավոր ԿԱՐՕ Պ. ՌԻՇԱԳԼԵԱՆ	Արտիստ ԳԱՐԼՕ ԵԱԶԻՆԵԱՆ	Պատասխանատու-Տնօրէն ՀՐԱՅԵԱՅ ՏԷՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆ	Տպագրութիւն Կ. ՔԷՇԻՇԵԱՆ ՈՐԴԻ
------------------------------------	--------------------------	--	---------------------------------